


1843 ԲԱԶՄԱՎԷՊ 1914

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ – ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

# ՕՐՀՆԵԱԼ ԵԿԵԱԼԴ ԱՆՈՒԱՄԲ ՏԵԱՌՆ

ՕՐՀՆԵԱԼ *է ստուգիւ Այն որ եկաւ Աստուծոյ անուամբ, Այն՝ զոր աստուածային շնորհք բազմեցուցին Սրբոյն Պետրոսի աթոռին վրայ, իբրև փոխանորդ Քրիստոսի երկրիս վրայ, հովուելու համար հաւատացելոց հօտը, և այս երկնային օրհնութեան հաւաստիք մ'է անունն ինքնին որով ուզեց կոչուիլ մեր Ս. Հայրն Սրբազան Քահանայապետն* ԲԵՆԵՏԻԿՏՈՍ ԺԵ։

*Օրհնութիւն կը բերէ նա աղմկայոյզ աշխարհի մարտախռով ժխորին մէջ, օրհնութիւն կը բերէ նա յուզեալ և ամբոխեալ սրտերու և հոգիներու։*

*Ընտրութեան ժողովին տագնապալից օրերուն յոյսերու և ակնկալութեանց մէջ իբրև աւետեաց բարբառ մը հնչեց իւր անունը։ Ոչ ոք կը մըտածէր զայդ, ոչ մէկ լրագիր իր ընտրութեան հաւանականութիւնը կը քարոզէր, և սակայն երբ Վատիկանի պատշգամին վրայէն Սեպտեմբեր 3ին ամբողջ աշխարհի հրատարակուեցաւ թէ Պոլոնիոյ արքեպիսկոպոսն քարտինալ Տէլլա Քիէզա ընտրուած է քահանայապետ Բենեդիկտոս հնգետասաներորդ անուամբ, ամէնուն սըրտեր ուրախութեամբ տոփեցին, անակնկալ մ'էր ամէնուն, բայց զամէնքը կը գոհացնէր։ Աստուած անգամ մ'ալ ցոյց կու տար թէ ըստ ժամանակաց կը յարուցանէ արժանաւոր հովիւներ Ս. Եկեղեցւոյ։ Հեռագրի թելերուն վրայ սահեցաւ իսկոյն իւր անունը բովանդակ աշխարհի չուրջը և ամենուրեք օրհնութիւններ բարձրացան յերկինս։*

Անձը եւ քահանայութիւնն

*Տէլլա Քիէզա մարքէզներու ազնուական տոհմին զաւակ՝ Սրբազան Քահանայապետն Բենեդիկտոս ԺԵ. ծնաւ Ճենովայի մէջ* 1854 *Նոյեմբեր* 21 *Ս. Աստուածածնայ Ընծայման տօ-*



digitised by A.R.A.R.@

նին օրը։ Ամիջապէս մկրտեցին զինքը տան մէջ բժշկին ձեռքով, որովհետև մահուան վտանգի մէջ կը գտնուէր. ծննդեան յաջորդ օրը կատարուեցաւ եկեղեցւոյ մէջ մկրտութեան արարողութիւնը։

Այն ատենէն ի վեր միաց միշտ տկար կազմուածքով, վտիտ ու նիհար, և փոքր հասակով։ Սակայն միտքով եղաւ միշտ արթուն և զօրաւոր, ընդունակ և փայլուն յիշողութեամբ, սրատես թափանցող և նաև սրախօս։ Մօր կողմանէ կը պատկանէր Մ՚իլիորատի ընտանեաց որ 1404ին ուրիշ քահանայապետ մ՚ալ ընծայած էր Եկեղեցւոյ յանձին Իննովկենտիոս Եօթներորդի։

Տարրական ուսումներն աւարտելէ վերջ կանոնաւորապէս կատարեց նաև բարձրագոյն ուսումներն, միշտ փայլուն հանդիսանալով ամենուն մէջ, հակառակ իր այնքան տկար կազմութեան։ Անգամ մը բժիշկն արգիլեց խստիւ մտաւորական որ և է յոգնութիւն. և մայրը գնեց իրեն համար փոքրիկ բահ մը. և մի քանի ամիս ժամանակ կ՚անցնէր ի Բէյլի, իրենց ընտանեկան ամարանոցին մէջ, գետինը փորելով և բոյսեր անկելով, մինչև որ բոլորովին կազդուրուեցաւ և զօրացաւ։ Այս միջոցին է որ անկեց նաև արմաւենի մը, որ իսկոյն ուռճացաւ և յետոյ իւր սիրելի ծառն եղաւ և որ պատուհեան՝ քահանայապետին արմաւենին պիտի կոչուի։

Հազիւ տասներկու տարեկան էր երբ օր մը խնդրեց հօրմէն որ զինքը կղերանոց մը դնէ, որովհետև կ՚ուզէր քահանայական կոչման նուիրուիլ. սակայն հօրը գաղափարներն իւր նըկատմամբ բոլորովին տարբեր ասպարիզի մը կ՚ուզէին պատրաստել զինքը, ուստի քաղցրութեամբ պատասխանեց. «Հիմայ դեռ ժամանակ ունիս. առ այժմ ուսումներդ առաջ տար, և երբ աւարտես զանոնք, դարձեալ կը մտածենք»։ Անցան տարիներ և փոքրիկ պատանին եղաւ հասուն երիտասարդ մը, աւարտեց փայլուն քննութեամբ փաստաբանութեան ընթացքը, և յաղթական վկայագիրը ձեռքն առած երբ համալսարանէն տուն դարձաւ, ըսաւ հօրը. «Ահաւասիկ փաստաբանութեան վկայագիրս, հիմայ թող տուր քահանայութեան պատրաստուիմ»։ Հայրը յուզուեցաւ որդւոյն յարատեւութեան և այս վսեմ գործին համար և համբուրելով օրհնեց զինքը։ Երիտասարդ փաստաբանն եղաւ հոգեւոր դպիր մը Հռովմայ Գաբրանիքա կղերանոցին մէջ ուսկից անցաւ յետոյ՝ 1879ին ազնուականաց ճեմարանը, իբրև նոր ձեռնադրուած քահանայ, դիւանագիտական ասպարիզի նուիրուելու համար։ Տարիներ վերջ պիտի վերադառնար հոն իբրև ուսուցիչ դիւանագիտութեան։

## Դիւանագէտ եւ արքեպիսկոպոս

1883ին Մոնս. Ռամբոլլա, ապագայ հռչակաւոր քարտինալը, ամենադժուարին և փափուկ պաշտօնով մը կը ղրկուէր իբրև դեսպան ի Սպանիա. այն պահուն էր որ Սպանիոյ և Գերմանիոյ մէջ ծագած էր ամենամեծ հակաճառութիւն Գարոլինեան կղզիներու պատճառաւ, և Ռամբոլլայ Մոնսինիորին արդիւնքն եղաւ որ այս ծանր խնդիրը յանձնուեցաւ Լեոն ԺԳ. քահանայապետին իրաւարարութեան։ Մոնս. Ռամբոլլա իր պաշտօնին երթալէն առաջ, գտաւ ազնուականաց ճեմարանին մէջ երիտասարդ քահանայ Տէլլա Քիէզան և զայն ընտրեց իւր անձնական քարտուղար և իբր ընկեր Սպանիոյ դեսպանութեան մէջ։ Հոն առիթ ունեցաւ աւելի ևս սերտիւ ճանչնալու և գնահատելու իւր քարտուղարին դիւանագիտական տաղանդը, այնպէս որ 1887ին դառնալով ի Հռովմ իբրև Պետական Քարտուղար Լեոն ԺԳ. քահանայապետին, դարձեալ

digitised by A.R.A.R.@



Ն. Ս. ԲԵ՛ՆԵՏԻԿՏՈՍ ԺԵ.

digitised by A.R.A.R.@

իր քով ուզեց ունենալ զինքը, նախ իբրև minutante և յետոյ նաև իբրև sostituto։ Դիւանագիտական ասպարէզին մէջ այնուհետև արագ բարձրացաւ և շատով յառաջացաւ նաև եկեղեցական պատիւներու մէջ։ Յաջորդաբար կը տեսնենք զինքը prelato domestico Ս. Քահանայապետին, ուսուցիչ դիւանագիտութեան, խորհրդական հաւատաքննութեան Ս. Ժողովոյ և հուսկ segretario della cifra, որ վատիկանեան դիւանագիտութեան ամենաբարձր պաշտօնն է յետ պետական քարտուղարի։ Այս պաշտօնը պահեց նաև իբր եպս. Լեոն ԺԳ.ի մահուամբ ծիրանաւորն Մէրրի Տէլ Վալ ստանձնեց պետական քարտուղարի պաշտօնը։ 1907ին անուանուեցաւ արքեպիսկոպոս Պոլոնիա քաղաքին, որ իտալիոյ մէջ քարտինալական աթոռներէն մին է։ Հոս էր որ առաջին անգամ ուղղակի յարաբերութեան ու շփման մէջ կը գտնուէր ժողովրդեան հետ, կը տեսնէր անոր կարօտութիւնքն ու պէտքերը և առաքելական եռանդեամբ ու անձնանուիրութեամբ անխոնջ կը ջանար օգնել ամենուն, մխիթարել, լուսաւորել և առաջնորդել։ Արդարասէր և ճիշտ, խստիւ կը պահանջէր ամենէն իրենց պարտուց կատարումը և ինքն առաջինն էր օրինակաւ զայն սորվեցնելու։ Առաւօտեան ժամը 5ին կ'ելլէր և մինչև կէս գիշեր կը զբաղէր իր թեմին գործերով, մինչև իսկ նամակագրութիւններն անձամբ կատարելով։ Ամենէն աւելի իւր ջանքն ու գութը կը ցուցնէր քահանայից և աղքատներու վրայ։ Անգամ՛ մը երբ պետական պաշտօնեայ մր տեղեկութիւն կ'ուզէր իրմէ քահանայի մը նկատմամբ, զոր ինքը Ս. Խորհրդոց մատակարարութենէ զրկած էր, վսեմութեամբ պատասխանեց. «իմ քահանաներուս վրայ Քահանայապետը միայն իրաւունք ունի տեղեկութիւն առնելու» և ազնուութեամբ ճամբեց զայն։ Իսկ աղքատաց համար ցուցած բարութիւնը անչափ էր. միայն իր անձնական դրամէն 40,000 ֆրանքէն աւելի շնորհած էր անոնց բարերարելու համար, բացի եպիսկոպոսական աթոռին իրաւունքէն նուիրած ողորմութիւններէ։ Չէր ալ հանդուրժեր որ աղքատները իւր նախասենեկին մէջ սպասեցնէին։ Օր մը գումար մը տուաւ իւր սենեկապանին և հրամայեց որ տանի այս ինչ աղքատին որ շատոնց կը սպասէր. և երբ սենեկապանն սկսաւ իւր յապաղումն արդարացնել՝ ըսելով թէ «Չէի կարծեր որ...», անմիջապէս խօսքը կտրեց հրամայական ձայնով մը. «Դու կարծելու բան չունէիր. ես պիտի ըլլամ դատողը. եթէ դուն ալ անօթի ըլլայիր, անոնց պէս պիտի ընէիր»։ Անգամ՛ մ'ալ հովուական այցելութեանց ելլալով իւր թեմին գիւղերու մէջ, հրամայած էր ժողովրդապետներու որ իրեն համար բնաւ յատուկ պատրաստութիւն մը չտեսնեն։ Հասնելով գիւղ մը, ուր մինչև կէսօր իր առաքելական պաշտաման գործերով զբաղած էր, ժողովրդապետին հետ ճաշի նստաւ։ Երբ երկրորդ կերակուրը հրամցնելէն վերջ տեսաւ որ կը պատրաստուին ուրիշ բաներ ալ բերելու, դարձաւ ժողովրդապետին և հարցուց թէ իր գիւղին մէջ աղքատ բնաւ չկա՞յ։

— Ո՛հ, գերապայծառ Տէր, խիստ շատ ունիմ... բայց ինչու՞ համար հետաքրքրուեցաք, ներելի՞ է ինձ հարցնել։

— Որովհետև պատրաստած սեղանդ կասկածել կու տար, պատասխանեց մի քիչ սրտնեղած, և անմիջապէս ոտք ելլելով գոհութեան աղօթքը մատոյց և հրամայեց որ միւս պատրաստուած կերակուրները բաժնեն աղքատաց։

Եօթը տարի այսպէս առաքելական հոգւով աշխատելէ վերջ, այսօր կը

digitised by A.R.A.R.@

բարձրանայ Ս. Եկեղեցւոյ ամենաբարձր գահուն վրայ իբրև փոխանորդ Յիսուսի Քրիստոսի, ճշմարիտ Հայր և անսխալ լուսաւորիչ և ուղղիչ համատարածեալ ժողովրդոց և առաջնորդ Ս. Եկեղեցւոյ, որուն համար կը մաղթենք որ Աստուած շնորհէ զինքն ընդերկայն աւուրս և յամայր ամս ճըշմարտապէս օրհնեալ և օրհնութիւնաբեր Հայր և Պահապան։

Հ. Ց. ԱԻԳԵՐ

# ԳԻՇԵՐԱՅԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Կը մեկնինք, կէս գիշեր է։ — Ծոյլ դանդաղկոտ է երիվարն,
Անիւներուն վրայ խախուտ կը տատանի կառքն երերուն.
Օ՛ն, մըտրակէ՛, կառավար...
Աներկիւղ ու զուարթ որդիք մենք դիպուածին, մեզի համար
Սպառնալիք չունի անտառըն, չունի ստուերը վըտանգներ,
Քարեր չունի ճանապարհն։

Քուն, թագուն է ամէն բան — օ՛ն, մըտրակէ՛, ո՛վ կառավար...
Կը դիտէ ամպէ մը դուրս լուսին հեգնի ծիծաղելով.
Ալեոր չարամիտ, դաշտավայրին վրայէն նըսեմ
Լըրտեսելով կ'երթայ նա։
Դէպ ի սքօղուած երկինք ծառերը ծուռ ոստերը կ'երկընցնեն,
Գալարուած կըմախքներու աղօթարար թեւերու պէս.
Ի՞նչ կը պատմես, ո՛վ անհուն...

Սառնորակ, ամպէ մը դուրս, լըրտեսելով կ'երթայ լուսին։

Կանգուն, յուզուած և գունատ, աչքս անքըթիթ և մոլորուն,
Ես, մազերըս տըւած հովին, վըհին կը հարցընեմ։
Կ'ընկլուզանէ աղջամուղջն
Հոգիներու աղօթքն ու քէն, սիրողներու շուրթին համբոյրն,
Երազն, ոճիրն և արցունքը, գըգուանքները խելաթափ
Թունաւորուած սէրերու։

Խաւարին մէջէն կ'անցնին հառաչանքներ և սարսուռներ...

«Ի՞նչ կ'ընես, ի՞նչ կ'ուզես...» կը հարցնեն ինձ՝ անսուրբ փոսէն
Ելած խոլ բոցիկներ՝ ցած ոմերու մօտ թափառիկ
Մեռելոցի մը մըլթին։
Չեմ գիտեր, կը փընտռեմ բաղդն։ Ուղին թերևս անվախճան է։
Անվախճան թերևս գիշերն. հոգ չէ։ Ունիմ արիութիւն։
Օ՛ն, մըտրակէ՛, կառավար...

Ես ձեզմէ չեմ վախընար, մեռելոցի խոլ հոգիներ։

Թըմբրալից դատարկութեան խաղաղաւէտ լըռութեան մէջ,
Խորհըրդաւոր պահանորդ, մարդկային միտքը կը հըսկէ,
Նըման անմահ հրեշտակի։
Կը հըսկէ, և թեւազգեաց յանդըգնութեամբ և երազով
Կոյր երկրին քովէն կ'անցնի և ամպերուն արծաթափայլ,
Գաղափարին և փոսին։

Փլատակներուն վրայ, ո՛վ միտք, իբրև անմահ հրեշտակ հըսկէ՛։

ԱՏԱ ՆԷԿՐԻ

digitised by A.R.A.R.@